

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համառուական ցուցահանդէսը և մեր տըն-տեսական զարգացումը. Աղքատացած խարբեր-ը. Թիւրքական ջրաձգութիւնները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ կարսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկու-թիւններ. Լուրեր Կ. Պոլսից. Նամակ Թիւրքի-այից. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱՎԳԻՆՆԵՐ.—ԲՕՐՄԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-ԿԱՆ. Թիւրքիայի ծովեղբայրները:

ՀԱՄԱՌՈՒՄԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԳԻՍԸ ԵՒ ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Համառուական ցուցահանդէսը Նիժ-նի-Նովոգորոդում, որի վրա այժմ կենտրո-նացած է մեր առեւտրական աշխարհի ու-շադրութիւնը, Ռուսաստանի ամբողջ ար-դիւնաբերութեան և անտեսական զարգաց-ման արտայայտիչն է հանդիսանում: Ինքը կառավարութիւնը ոչինչ միջոց չէ խնայել և չէ խնայում՝ փայլուն դարձնելու հա-մառուական ցուցահանդէսը: Նոյն իսկ Նոյս Մեծութիւնները բարձրագոյն հովանա-ւորութիւն և բարեհաճութիւն ցոյց տա-լու այդ մեծ ձեռնարկութեան, որն ահա-զին աշխատանք և ահագին զուժանք է խել պետութիւնից:

Եթէ ուշադրութեամբ հետեւեք այն բո-լոր կարծիքներին, որոնք արտայայտվում են ամբողջ Ռուսաստանի մասին մէջ և այն դիտողութիւններին, որ անում են Նիժեգո-րոդեան ցուցահանդէսի մասին հեղինակա-ւոր անձինք, պարզ կը տեսնեք, որ այդ կարծիքները և դիտողութիւնները բաժան-վում են երկու միմեանցիկ միանգամայն տարբեր, միմեանց կատարելապէս հակասող մասի.—մի մասը պնդում է, որ համառու-ական ցուցահանդէսը մի ակաւոր ապացոյց է մեր հայրենիքի անտեսական, արդիւնա-բերական, առեւտրական յետադիմացութեան

և անզարգացման, իսկ միւս մասը ոգեւոր-ված կերպով հաւատացնում է, որ Նիժե-գորոդեան ցուցահանդէսը ուսուցաց անտե-սական կեանքի փայլուն զարգացման պե-րձաւս փաստն է, և զերազանցում է միւ-ն իսկ Պարիզի և Չիկագոյի համաշխար-հային, պատմական նշանաւոր ցուցահա-նդէսները...

Դուք տեսնում եք, ընթերցող, որ այդ երկու կարծիքները միմեանց անհաշտ թըշ-նամի կարծիքներ են, որոնցից մէկը աշխա-տում է հասկացնել թէ լայնատարած Ռու-սաստանը դեռ անտեսական զարգացման ստոր աստիճանների վրա է կանգնած, և ուրեմն անհրաժեշտ է վիթխարի ջանքեր գործ դնել՝ որ և է շուտփելի առաջադե-մութիւն անելու համար, իսկ միւսը՝ հա-ւատացնում է, թէ երջանիկ է այն երկիրը, որը կարող է Նիժեգորոդեան ցուցահա-նդէսի նման ցուցահանդէսներ կազմել, ցու-ցահանդէս, որը համարձակ կարող է մը-րցել եւրոպական և ամերիկական ամենամեծ ցուցահանդէսներին հետ, ապա ուրեմն Ռուսաստանը կանգնած է արդիւնաբերա-կան և անտեսական այնպիսի բարձրութեան վրա, որ կարող է հանդիսու խղճով նայել իր երջանիկ և հարուստ ապագային:

Մենք մեզ հեղինակաւոր չենք համա-րում լուծել այդ «դժուար» հարցը, և կարական կերպով ասել, թէ այդ երկու-միմեանցից միանգամայն տարբեր կարծի-քները որն է աւելի ճիշդը և մօտիկ իրա-կանութեան,—ցուցահանդէսի վախճանը այդ ցոյց կը տալ,—բայց մենք միանգա-մայն դէմ ենք և մինչև իսկ միջասակար-նեք դանդաղ այն ինքն ազդեց ուղղութիւ-նը, որը արտայայտում էր համառուական ցուցահանդէսի փառաբանողները, որովհե-տե և այդպիսի մի ուղղութիւն, որ մինչև իսկ թոյլ է տալիս իրան համեմատել Նի-ժեգորոդեան ցուցահանդէսը Պարիզի և Չիկագոյի ցուցահանդէսներին հետ, կարող

է միանգամայն վնասել այն խիստ քննա-դատական, մեր անտեսական պակա-սութիւնները ցոյց տուող ոգուն, որը միշտ պէտք է տիրի մեր անտեսադե-տական զարգացման կեանքի մէջ, և առանց որի մենք կարող ենք հասնել կատարելա-անշարժութեան...

Լայնատարած Ռուսաստանի արդիւնա-բերական, առեւտրական և գործարանական ընդհանուր կեանքը դեռ շատ անմշակ, խակ և թերի զարգացման շրջանի մէջ է: Նա հեռու է արեւմուտքից և շատ հեռու: Հայրենիքի ընդհանուր շահը պահանջում է դեռ շատ մեծ ջանքեր և շատ մեծ ոյժ գործ դնել այդ անպարկիւր վրա, և այդ ջանքերը արդիւնաւոր դարձնելու համար անհրաժեշտ է, ոչ թէ «պղծաբար» դո՛ւ լինել այն բոլորից, ինչ որ կայ, և աչքերը ծածկել մեծամեծ պակասութիւն-ներին առաջ,—այլ, ընդհակառակն, ներկան համարել շատ քիչ, շատ պակասաւոր և ձգտել դէպի կատարելագործում, դէպի ա-ւելի բարձր զարգացում:

ԱՂԲԱՍԱՅՈՒ ԽՈՐԲԵՐՈՒՐ

(Թղթակցութիւն «Daily News» լրագրի)

«Անցել է վեց ամիս այն օրերից, երբ կո-տորածների և կողոպուտների ընդհանուր ա-ւելքը, ողորդելով Թիւրքիայի հայաբնակ գա-ւառները, ճարակեց և խարբերեց: Այս վեց ամիսայ ընթացքում կարօտեալներին շատ փոք է բաժանված Եւրոպայի և Ամերիկայի բարե-գործների կողմից: Անկասկած, շատ հետաքրքա-կան է նուիրատուների համար, թէ նրանց փո-ղբեր ինչ գործարարութիւն գտան և թէ ինչ վի-ճակի մէջ են ներկայումս կարօտեալները:

«Ամենամեծ կարիքի կարօտ է այն չրջանը, որ ստանում է նպաստներ խարբերից: Այդ չրջանում նպաստի կարօտ են մօտ 100,000

անձ: Մօտ 25,000 թիւրքական լիւրա (22727 անգլիական ֆունտ ստերլինգ) բաժանված է 60,000 անձանց, ուրեմն ամեն մէկ մարդու մէկ ու կէս թիւրքական լիւրայից պակաս (մօտ 9 չիլինգ): Եթէ մտաբերենք, որ ժողովուրդը կորց-րել է իր ամբողջ սեփականութիւնը—շտեմա-րանները, հագուստը, գործիքները, նոյն իսկ և տները, կը տեսնենք, որ ժողովրդի ստա-ցածը շատ քիչ է, այնքան որ նրանք կեն-դանի են մնացել: Ես քննել եմ նպաստ բաշխող յանձնաժողովի գրքերը և մի չարք գիւղեր ու-սումնասիրելու գործի դրութիւնը: Յանձնաժո-ղովը տուել է կերակուր, հագուստեղէն, անկո-ղին, մի քանի գործիքներ և նոյն իսկ մի փոքր գումար՝ վերականգնելու անտեսութիւնը, բայց փոքր քանակութիւնը այնքան մեծ չէր, որ կա-րելի լինէր բաւականաչափ օգնութիւն հասցնել:

«Նորեւս ես այցելեցի ինն գիւղ: Մէկում գիւղացիները գերաններ են կտրատել գիւղի շուրջ բուսնող անտառից՝ անել չինելու համար, որպէս զի պատսպարվեն առաջիկայ ձմեռը: Միւսում գիւղացիները ցեխից աղիւսներ էին կտրում որմ գնելու համար: Մի ուրիշ գիւղում, երբ ես չը տեսայ աների մասին որ և է հո-գածութեան նշան, հարցրի պատճառը և ստա-ցայ միատեսակ պատասխան. «Ինչպէս կարող ենք մենք չինելութիւն անել,—ասում էին,—ոչ փող ունենք, ոչ փայտ և ոչ էլ այժմ սերտ, մենք վախենում ենք, որ մեր վիճակի բարեո-րումը մեզ աւելի ևս վնասի»:

«Աշխատաւոր տղամարդկանց և կանանց մի սերնդի գործ ոչնչացած է և այժմ մարդիկ ոչ յոյս ունեն և ոչ սիրտ: Բայց եթէ աներ չը չին-վեն, առաջիկայ ձմեռը շատ մեծ գրկանք-ներ կը կրեն: Օրինակ կարող է լինել Հուկ-լու նախկին հարուստ գիւղը: Նա ունի երեք մեծ եկեղեցիներ, որոնք պատկանում են լու-սաւորչական, բողոքական և կաթօլիկ դասնու-թիւններին, գիւղի աները չինված էին հոյա-

րա կանաւ պէս, և այդ պատճառով էլ խաչի և Մահիկի ընդհարումը երբեք պակասած չէ այն-տեղ և պիտի չը տակաւ: Թղթի վրա օրէնքներ գծելով այդ հաւատարմութիւնը չի իրականանայ, քանի որ ոչ այդ օրէնքները գործադրելու կամք կայ, ոչ էլ գործադրող ոյժ և մարդ: Չուկը, ինչ-պէս ասում են, գլխից է հոտած. ոչ մի մասնաւոր և կրօնաւ, կցկուտր, խարբեր մի-ջոցներ չեն գործի այդտեղ: Դարիս սկզբից մի-չև հիմա բոլոր օսմանեան սուլթանները պար-տաւորութիւն են համարել իրանց համար, կա-սերական հրովարտանքներով քարոզել և հաստա-տել այդ հաւատարմութիւնը: Սուլթան Մահմու-դից յետոյ, որ իսկապէս միակ լուրջ և գործն ղերն է կատարած Թիւրքիայում նոր կարգը մտցնելու մասին (տես «Մշակ» № 27 և 28 «Իւլէմա»), իր որդին Աբդուլ-Ազիզը (Համիդի հայրը) դեռ 16 տարեկան հասակում, 1839-ի նոյեմբերի 3-ին մի խաթիւ Եւրոպ օտարա-գրեց, որ յայտնի է Գիւլիստանի խաթիւ անունով և որով շատ ընտիր բարեկարգութիւն-ներ էին հրամայվում և մեծ ազատութիւններ և առաւելութիւններ շնորհվում քրիստոնեայ հպատակներին: 17 տարի վերջը, (1856), Պարի-զի դաշնագրութիւնից 4 օր առաջ, նոյն Աբդուլ Ազիզը մի ուրիշ խաթիւ (Հիւսնուհան) էր հրամարարում 21 յօդուածից բաղկացած, նոյն-պէս յօդուած քրիստոնեաներին: Աբդուլ Ազիզը յայտնի Աբդուլ Ազիզը աւելի ստատաձեռն գտնվեց. նա փոխանակ մէկի, մի քանի խաթ-

*) Այս մի տարբերութիւն չը կայ խաթիւ Եւրո-պայի ու խաթիւ Եւրոպի մէջ, կարելի է հաւատարմութիւն երկու կերպով էլ տեղի ունենալ: Նը-շանակում է արքունի հրովարտակ, իսկ երկրորդը ու լուր և կան հրովարտակ այն համոզմամբ, որ խա-թիւն պէտք է մի խաթիւ (ձեռնագիր) նուերա-կան է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՒՆՈՒՄ ԵՒ ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

XVI

Բարենորոգումներ Նոյս Մեծութիւն
Սահմանադրութիւն

1876 թվի մայիսի 30-ի առաւօտեան, Բոսֆո-րի եղբերը որոտում էր թնդանօթի հարուածնե-րից: Եւ այդ ժամանակ Գ. դատաւան աշակերտ էի, և մեր վարժարանում, ինչպէս անշուշտ Կ. Պոլսի բոլոր այլ հիմնարկութիւններում, մեծ ի-րաքանցում կար: Մենք ուշադրութեամբ համա-րում էինք հարուածները, առանց դեռ գիտնա-լու թնդանօթի առիթը, և ուսուցիչ-ներին ոչ մինչ չէր ուղում պարզել մեզ այս գաղտնիքը, թէ և տեսնում էինք, որ նրանք մի-մեանց մէջ խորհրդաւոր կերպով խօսում և ակ-նարկութիւններ էին անում: Կէսօրին մօտ էր, երբ իր սովորական ժամին ներս մտաւ «օսմանեան» լեզուի և գրականութեան ուսու-ցիչը: Սա մի թիւրք երիտասարդ օֆիցէր էր, որ մի և նոյն ժամանակ դատաւոր էր թիւրքաց զինաւորական ակադեմիայում:—«Վերջապէս, գո-չեց մեր ուսուցիչը, երբ մեր դասական սենեա-կի դուռը փակեց իր ետից, վերջապէս բարձր տէրութիւնը *» ազատվեց իր բունակալից:

*) Թիւրքաց զբաղման և նոյն իսկ պաշտօնական լե-զուում թիւրքերէն կոչվում է Դիւլէթի լեզու, իսկ ինչ որ նշանակում է բարձր տէրութիւնը: Մենք, Հիւսնու-նի թիւրք լրագրիչները ուրեք կերպ չեն կոչում իրանց պետութիւնը: Եթէ ոչ բարձր տէրութիւնը: Իս-րաէլիս պէտք էր ասել Դիւլէթի-Ալեյի-Օսմանի, բայց այս վերջին Օսմանիէն, յօսմանեան բառը միշտ զեղջրում է:

Մեր նոր վեհապետը՝ սուլթան Մուրադ Նոր կարգեր, նոր դրութիւն կը մտցնէ երկրում և մենք չուտով կանոնաւոր վարչութիւն կունե-նանք: Այս և սրա նման յուսալից խօսքերով սկսված առաջադանից յետոյ նա մեզ երկար-րէն պատմեց թէ ինչպէս նախորդ գիշեր, ինքն, որ զինուորական դպրոցի պաշտօնակիցներով և ուսանողներով մտել էին Քէյիթիկաչի պալատը և կոխել ներքին սենեակները, թէ՛ Միշհատ, Ռիւ-զի և Հիւսէյին Ալի փաշաների շնորհիւ սուլ-թան Ազիզը զաճնկեց էր եղել և իր եղբորորդին ու օրինաւոր ժառանգը՝ Մուրադ էֆէնդին նստել խաթիֆայական աթոռը: Մի և նոյն ժամանակ նա գրպանից հանեց և մեզ տուեց կարգաւոր նոյն օրվայ «Բասթիլէթ» լրագրի համարը, որ մանրամասն պատմում էր եղբորութիւնը: Այն օրը դասի համար յատկացված ժամը մեր քաջ դաւադիր դատաւորն ամբողջապէս նուիրեց այդ նիւթին, երկարօրէն կանգ առնելով յարակից պարագաների պատմութեան և ապագայ բարե-փոխումների նկարագրութեան վրա: Նա այն-պէս էր ոգեւորված, որ անկարող էր դատի կամ կողմնակի խղճի մասին խօսել կամ մտածել... Ինքը երիտասարդ թիւրք կուսակցութեան էր պաշտակնորս և համարվում էր նրա լուսագոյն անդամներից մէկը...

Այո, մայիսի 29—30-ի գիշերը՝ նոր-թիւրքե-րի կուսակցութիւնը՝ Եւրոպի-Իսլամի հետ միա-նալով տարել էր յաղթանակը հնի վրա, զաճն-կեց արեւ ու սպանել սուլթան Աբդուլ Ազիզին և Մուրադ էֆէնդուն նստեցրել թագաւոր հա-մարեա թէ բռնի: *) Դաւադիրները գլխաւորնե-

*) Հիւսէյին Ալի փաշա այն զեղբոր, ընդօրէն-րը ձեռք բերել էր ներկայացել Մուրադ էֆէնդին և նրան, այդպէս, զենքի ոյժով համոզել, որ ընդունի սուլթանական եղանակութիւնը:

կապ, երկու մեծ պահեստատներ կային բազմաթիվ սենսիվներով: Սակայն բոլորը աւերվեց: Այսօր կառավարիչները ապրելիք բոլոր տները մէկը միասին կտան: Եթե միայն վրանաւոր: Այսօր միայն պատերն են մնացել իբրև վկաներ կատարված չարագործութեան:

Գարնան ամենալաւ ժամանակը անցաւ առանց ցանկութեան: Այնպէս որ հունիւն չէ կարող սպասել վերադարձնալով իրենց տները: Եւ առաջիկայ ձմեռը խորհրդի դաշտը թշուառութեան և կարօտութեան մի աշխարհ պէտք է ներկայացնի:

Մարդիկ հասարակ անկողնից անգամ դուրս են: Ամբողջ ձմեռ քնել են գետնի վրա՝ առանց վերադառնալով իրենց տները, որոնք քան անկողին են բացում եղել, այժմ կառավարվում են մի անկողնով: Հիւանդ և առողջ մի և նոյն ծածկուցի տակ են հանգստանում: Մայրերը երեխայ են ծնում՝ անկողնի անգամ չունենալով, որ վրան պառկեն: Դպրատի ֆոնդից 4000 լիւրա (3636 ֆրանկ ստերլինգ) ծախված է անկողին և հագուստեղէն գնելու համար, բայց դա մի կաթիլ ջուր է: Մեծամասնութիւնը դուրս է մնացել այդ օգնութիւնից: Մարդիկ մահ են գալիս ցնցոտիների մէջ: Փոխնորդ չունեն, որպէս զի լուսնանա իրանց հաշի չարերը փող չը կայ, որ մի փոքր ստացն գնեն լուսնային համար: Այլ ևս չեն խօսում կերակուր պատրաստելու ամաններով մասին: Ծառ տնեւում ոչ մի աման չը կայ, մի քանի տներում նաւթի արկղներ են գործածում կերակուր պատրաստելու համար, իսկ շատ դէպքերում ոչ մի կերակուր չէ ելելու: Ժողովի բաւականատեւում են ցամաք հացով:

Կապտի փողով չեն հոգալով իր լուծած կարիքները, չը նայելով որ նրանք անհրաժեշտ են: Կապտը բաժանվել է երեք անգամ ձմեռվայ և գարնան ընթացքում: Այժմ փողը հատել է և ամսից աւելի է, որ նոյապատ չէ բաժանվել: Ծառերը նորից չքաւորութեան և սովի հանդէպ են կանգնած: Եւ ենթադրում էին, որ ամառը մոտենալու պէս ժողովուրդը պէտք է կազմակերպվի և այլ ևս նոյապատ կարելի չը զգայ: Սակայն այցելութիւնն համոզեց ինձ, որ կարելի ծայրահեղ մեծ է և այնպիսի քաղաքներում, ինչպէս են Մալաթիա, Արաբիկ և Պալատ, եթէ դադարեցնեն նոյապատ տալը, ժողովուրդը պէտք է քաղցից մեռնի: Այսօր գիւղում են անից տուն չըլնելի և նայելի նրանց օչնակները և շտեմարանները: Տները մեծ մասն մէջ են դառն միայն մի քանի ափ ցորեն կամ ալիւր, մի քանի հաւիթ, երբեմն փոքր ինչ աղ և երկու կամ մի հաց: Տան պաշարը հաղի կարող էր բաւականա՞յն մի կամ երկու օր, իսկ մի քանի տներում կերակրի

թէ եր ստորագրեց, մէկը միւսից լաւ, մէկը միւսից աւելի աղատամիտ և առաջադիմական սուրդութեամբ գրված: Բայց թիւրքերն տեղից չէր շարժվում, նա մի գծի չափ առաջ չը գնաց այդ խաթիկներով: Քրիստոնեաները դարձեալ և երբեք չը վայելեցին քաղաքական հաւատարմութիւն, չը նայելով շարունակ կրկնվող հանդիսաւոր խոստումներին և վերված խօսքերով լի արքայական հրովարտականքին: Որովհետեւ ոչ մի խաթիկ երբեք չը գործադրվեց, այլ մնաց մեռած տառ, և միայն արեւիկի զարդէ: Սակայն աջակցութեան խաղի նման թիւրք կառավարութիւնը ամեն անգամ էլ աշխատել է, որ արտաքին ձեռքերը կողմերը անկատար չը մնան: Օրինակի համար, ամեն մի խաթիկ հրատարակվելուց յետոյ, սաղաղամները երկար չըլնալուց քրեական գրեցին վաղինքին, հրամանագրելով, որ խաթիկ տնօրինութիւնները գործադրվեն: Վաղինքին էլ այդ չըլնալուց քրեական գրեցին: Եւ այդ չըլնալուց կարողացան տուն իրանց պաշտօնարաններում և ապա նրանց պատճենները ուղարկեցին միւլթաքարքներին, որոնք էլ իրանց կողմից յանձնեցին իրանց ենթակայված պաշտօնականներին և վերադառաւ: Այս բոլորը կատարվելուց վերջ՝ Tout est vite rentré dans l'ordre accoutumée, խաթիկի հիւսնաները գործադրված էր համարում կամ թողնում էին, որ երկրից հրեշտակներ իջնեն գործադրելու և իրանք սկսած սուլթանից մինչև հասարակ քեւթիքը և զարթի ինչն էլ իր ընտ էին մտնում և աւելի խոր կերպով ննջում, զարթնում էին միայն այն ժամանակ երբ եւրօպայից հաւաքաբար շարժում էին նրանց թմբուկներից և կամ մանաւանդ երբ մի տէրութիւն, յատկապէս Ռու-

սաւորը սպառնում էր բոլորովին, և ոչ մի յուսահատել չունէին:

Կորստի գիւղը սակայն ամենից աւելի ճնշող աղաւորութիւն թողեց: Երբ մենք մօտենում էինք գիւղին, ընակիչները հեռուից դիտում էին մեզ և վաղցին դէպի մեզ: Նրանց ձերանի ըստնան՝ յենված գաւազանի վրա, կանգնած էր, իսկ ժողովուրդը լալիս էր և աղաղակում: «Մենք քաղցած ենք, հաց չունենք»: Եւ անձամբ այցելեցի տները և համոզվեցի, որ հացի պաշարը սպառված է: Բայց հացից և խոտից ուրիշ ոչ մի կերակուր չը կար այդտեղ: Տները այցելելիս ես հարցնում էի կանանց՝ արդեօք հաց ունեն, իսկ նրանք անկարող լինելով պատասխանել, լալիս էին և դուրս գնում: Ամեն տան մէջ ես տեսնում էի խուրճարով խոտ՝ բերված դաշտից: Ծառերի միայն կերակուրը այդ էր: Մարդկանց երեւոյ դեղին էր, նիհար, հիւանդոտ: Մայրերը սովել էին ծծկեր երեխաներին իրանց կրծքներին: Իսկ նրանց մօտ ընկած էին խոտի խուրճար:»

Ն—ն

ԹԻԻՐԵԱՅԻՆ ԶՂԱՅՊՈՒԹԻՆԵՐ
(«Birjehiye Bîdosti», № 192)

Թիւրքաց վարչութեան անբովանդակ արտոնները շարունակում են ստեղծել ամենամահաւատի փառսեր: Անկարելի է դրանց թիւն չաւելացնել և այն փառսերը, որոնց մասին հաղորդում է այսօրվայ հեռագիրը կ. Պոստի: Ոստիկանութեան միջնորդը գնաց հայոց Պատրիարքարան և յայտնեց խառն ժողովին լիմիտարների խորհրդի վճիռը, որով ժողովի անդամները համարվում են մեղաւոր այն բոլոր խառնակութիւններին համար, որոնք տեղի ունեցան Անատոլիայում: Դրա հետ միասին նոյն միջնորդը յայտարարեց, որ Կառավարութիւնը վճել է այդ ժողովը պատասխանատու համարել նաև խառնակութիւնների շարունակութեան համար և խիստ պատմել նրան: Խառն ժողովը փորձեց ներկայացանել բացառութեամբ այդ անակնկալ մեղադրութիւնը: Ոստիկանութեան միջնորդը մերժեց մինչև անգամ լսել ժողովի արդարացումները և գնաց, երևի շատ գոհ՝ որ այդքան փայլուն կերպով կատարեց թիւրքաց միջնորդների խորհրդի մի այդպիսի անսխալական վճիռը:

Այսպէս է վարվում թիւրքաց կառավարութիւնը այն պետութիւնների աչքի առաջ, որոնց մօտ թիւրքերն հարկերը չեն անգամ պարտաւորվել և լուծացնել իր հպատակ քրիստոնեաների դրութիւնը և իրադրոյթը, վերջապէս, այն բեֆօրմները, որոնք պայմանաւորված էին անցեալ տարի:

աստատնը վառօդի հոտ էր դնում նրանց քիթի տակ... Բայց ինչու համար ոչ մի խաթիկ չէր գործադրվում թիւրքերի կողմից: Որովհետեւ նաև եւրօպական պետութիւնները փոխադարձ նախանձից կուրացած երբեք սերտ կերպով չեն աղաք թ. Դրան վրա և չեն ստիպւած, որ նախ ինչ ոչ այդ բաղձալիկ հրովարտականքից մէկը, գոնէ այն զանազանութեան պայմանները դործադրէ, որը նա ի բեր և եւրօպական պետութիւններին հաւատարմ դիրք ունեցող, նրանց հետ միասին ստորագրել է: Ամեն մի արեւելեան պատերազմից յետոյ՝ թիւրքերն խաղաղութեան դաշն կապելիս՝ այդ դաշնի պայմաններից մի քանիսն էլ միշտ վերաբերում էին իր ներքին բարեկարգութեան խնդիրներին: Եւ երբ ոչ մի մահաւատական կղերականութիւն իւրեան՝ սկզբից մինչև վերջը բարոյութ է և երբեք էլ պիտի չը դադարի քարոզելուց թէ յետոյ մահաւատականը՝ իբրև Աստուծոյ ընտրեալը, իբրև Մահաւաճի՝ այդ Աստուծոյ գէտան փէյզդաճէ՛ր ի՞նչ *): Հարազատ գաւաղը, հարկը անգամ աւելի բարձր է, աւելի գերադաս է թէ՛ այս և թէ՛ հանդերձեալ աշխարհում, քան ամենաբարձր քրիստոնեան: Եւ այս տեսակ ցնորամիտ քարոզներով անված և համոզված մահաւատական ժողովուրդը մեծից մինչև փոքրը, առանց հանքի երևակայութեամբ է միշտ իր վրէժը իր ընդ առաւելութիւններ ունի քրիստոնեայի վրա, հետևաբար քրիստոնեան երբեք իրաւունք չէ կարող ունենալ ամեն պարագայում և կեանքի աւան աստիճանում մահաւատականին կատարելա-

ձէնց միայն այն, որ մեծ պետութիւնները միջամտեցին Հայաստանում տեղի ունեցած լուսաւորութիւնների պատճառով, պէտք էր ինքնի բեւրէյ Բ. Կուրը և ցոյց տար նրան թիւրքաց վարչութեան ամբողջ արատաւորութիւնը, որ անդադար բացարձակ ապստամբութիւններ է պատճառում Ռամանեան պետութեան այս կամ այն կողմում: Անկարելի է մեղաւոր համարել նրանց, որոնք չեն կարողանում ապրել ափսոսանք լուծի տակ: Մեծ պետութիւնները շատ անգամ են ներշնչել այս ճշմարտութիւնը Բ. Կրան, և հաւաք անգամ հրաւիրել են նրան լուրջ կերպով աշխատել այն ժողովուրդների շատ թէ՛ քիչ տանելի կացութեան մասին, որոնք դեռ բախտ չեն ունեցել աղաւթի այդ քաղաքային պետութեան իշխանութիւնից: Այդ ներշնչումները արել են Բ. Կրան բարեպաշտականները, որպէս զի պահպանվի թիւրքայի գոյութիւնը և վերացվի նրան բաժանելու հարցը: Զէնց սղօղիսի դիտաւորութիւններով էլ զեկավարվում էին պետութիւնները անցեալ տարի: Մենք, սակայն, տեսնում ենք, թէ ինչպէս է պատասխանում Բ. Կուրը այդպիսի բարեպաշտական վերաբերմունքին: Այնչէ՛ չէ լուծվում բեֆօրմների մասին, աղաքանակութիւնը հաշտեցնելու և հանգստացնելու մասին, յոյսեր առնելով նրան բարեկարգութիւնների համար գործընթաց իսկական ջանքերով: Դրա փոխարէն Բ. Կուրը վերաւորում է հայոց հաղորդականութիւնը և հայոց եկեղեցական վարչութիւնը և յայտնում է բոլոր քրիստոնեաներին, թէ ինչ հասկացողութիւններ են տիրում թիւրքայում արդարապատուութեան և բրէական պատասխանատուութեան մասին:

Այս ամբողջ հիմնարկութիւն դառնում է դաւաճարութեամբ միջնորդների խորհրդի գաղտնի նիստում, իսկ հրապարակով և հանդիսաւոր կերպով յայտարարվում է, որ մի քանի մարդկանց պիտի պատժեն բոլորի մեղքի համար, մինչև իսկ չը լսելով և չը կամենալով իմանալ նրանց արդարացումները: Այսպէս է այն բեֆօրմը, որով Բ. Կուրը վճել է բարեբարութիւն անել հայերին: Նոր սպառնալիքները և նոր անխաղաղութիւն թիւրքաց կառավարութեան աչքում՝ համարվում են աւելի յուսալի միջոց Կառավարութիւնները՝ վերջացնելու համար, քան այն միջոցները, որոնցով կարելի է վերացնել անկարգութիւններն ու չարագործութիւնները, որոնք ծանրված են ամենքից, և ամեն ժամանակ, ամեն տեղ ծնեցնել են ժողովրդական անբաւականութիւն: Նշանաւոր է, որ հայերին սպառնացող պատիժները վերանորոգվեցան Զէնց նոյն այն ժամանակ, երբ ապստամբութիւնը Հայաստանում սպառնաց, և նոյն այն ժամանակ,

պէս հաւասար դիրք առնել: Քրիստոնեայի այս համեմատական ստորութիւնը մահաւատական աչքում՝ միշտ սրբալուրճված է եղել թրքական դատարաններում, չէր փախել լիմիտներով: Այս վրէժնի համաձայն, չը նայելով քարոզված հաւատարմութեան բոլոր օրէնքներին, և ընդունված միջոցաւոր պայմաններին, որոնց վերջին և ամենից հանդիսաւոր Բիւրէիի դաշնագրի 62-րդ յօդուածն է, երբեք օրինակ չէ եղած, որ դատարանում մի քրիստոնեայի վկայութիւնը ընդունվի ընդդէմ մի մահաւատականի քրիստոնեան իբրև թէ ժողովում և թէ կրօնով ստոր դիրք ունեցող էակ, մի խօսքով իբրև գեւաւթուր, ինչպէս կը համարձակի դատաւարտել իր վկայութեամբ մի թիւրքին, որ լեւհամագուլլա՛ն միւսլիմա՛ն *): Եւ Այս մեծ խտրութիւնը, այս անհաւատարմութիւնն ի նկատի ունենալով, թիւրքերն իր քրիստոնեան՝ բուլղարը, յոյնը, հայը, ասորին, պաղանային, մակեդոնացիներ, երբեք այնպէս սերտ կապված չեն եղել ընդհանուր հայրենիքին, ինչպէս այդ պատահում է որիւր բաղնայնից և բաղնայնի միջոցով միմեկին ընդկապած մի տէրութեան մէջ, երբեք նրանք թիւրք տէրութիւնը՝ իրանց սեղանական պետութիւնը չեն նկատել և հետևաբար նրա դարգացմանը երբեք անկեղծօրէն չեն աշխատել:

Դառնալով, որ թիւրքայում ոչ ոք, ոչ մահաւատական և ոչ քրիստոնեայի երկրի դարգացման համար ոչ մի ջանք գործ չէր դնում թէ՛ այն ժամանակ և թէ՛ այժմ: Որովհետեւ թիւրք մահաւատականը առհասարակ թէ մտաւորապէս անպատ-

երը Սիրիայում և Կրեաէ կղզում թիւրքաց զօրքերին հարկաւոր է վաղել: Կառանակութիւններին՝ նոր մեղաւորների ետեւից: Թիւրքաց կառավարութիւնը, ինչպէս և ամեն մի ափսոսան կառավարութիւն, երբեք ընդունալ չէ բարի գործեր, յօժար կամքով աշխատել բարօրութեան և արդարութեան համար: Ապստամբվածների հետ Բ. Կուրը պատրաստ է սկսել բանակցութիւններ և համաձայնութիւն կայացնել, բայց Զէնց նրա մարդիկ խաղաղացրած են և նստած հանդիստ, ափսոսան բանակցութիւնը խրախուսվում է և միայն սպառնալիքներով, սարսափ աղբիւրով և պատիժներով է պատասխանում նրանց, որոնք ձգտում են միայն այն բանին, որ իրանց լսեն:

Եւ մեծ պետութիւնների խորհուրդներին Բ. Կուրը սովորել է զիջանել միայն ծայրահեղ դէպքերում, երբ այդ խորհուրդների հետ գործում է և ոչ թէ թիւրք իշխանութիւնների գաղտնի արարքները և թիւրք փռայնի բացարձակ անհաւանդութիւնը արդէն չեն թող տալիս կազմել այն համոզմունքը, թէ կարելի է կարգը վերահաստատել Կրեաէ կղզում: Մեծ պետութիւնները, ինչպէս լսվում է, ստիպողաբար պահանջում են, որ փոխի թիւրք զօրքերի գլխաւոր հրամանատարը, որ կրեապոլսիցի դէմ է զիջանալով, արշաւանք էր սկսել այն միջոցին, երբ պետութիւնները երաշխաւորել էին, թէ Բ. Կուրը կընդունի բոլոր անհրաժեշտ զիջումները, բայց թիւրք կառավարութիւնը ուշացում է այդ շատ հասկանալի և ինքնայի պահանջի կատարումը: Թիւրք կառավարութիւնը, երբեք, ժամանակ չէ ունեցել զբաղվել այդ պահանջով: Նրա ուշադրութիւնը գրաված էր այն դարձանալի լիմիտ յօդուածով, որ այժմ պատուից հայոց պատրիարքարանի խառն ժողովի զիջման վաղուց տառապող Հիւանդ մարդու՝ այս բոլոր Հիւանդութիւնները չէ, որ կարող են, վերջապէս, զգուհն պատճառել Եւրօպային:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿԱՐՏԻՑ

Յուլիսի 7-ին

Յուլիսի 6-ին, քաղաքային ժողովարանի դահլիճում, դերասանուհի օր. օր. Վարդիկեր, Մարի-Հրանդ, դերասան Օհանես, սիրողների աշակերտներ, խաղացին «Մայրական սեր» պիէսը: Աչքի էր ընկնում իր գեղեցիկ խաղով օր. Վարդիկերը, որը կատարում էր մօր դժուար դերը: Ինչ վերաբերում է օր. Մարի-Հրանդին և օր. Օհանեսին, չը նայած որ այնքան էլ աշխատ է, թէ կրօնական մոլեռանդութեամբ կաշկանդված և թէ որ և է ստեղծագործող, նախաձեռնող կամ կրթող ոգուց դուրի, այսպէս է նրանց ամենալաւ դասակարգը: Իսկ վարդիկ մասնաւոր, սկզբից մինչև հիմա միշտ պարապված է եղել կեղեցումներով, զանազան ձևերի տակ, նայելով թէ ինչ պարագայի մէջն է նա և ո՞ր ձևն է աւելի դիրին, աւելի յաջող: Կեղեցումներին հաւատարմութեւն են կապել նաև երբեք թիւրք ժողովուրդը: Բայց տիրող անտանելի բեֆօրմից բողոքը մինչև այն ժամանակ, այնքան մինչև որանից մի քանիք դար առաջ գրեթէ միայն քրիստոնեան էր, որովհետեւ մահաւատականը, ֆրատիստին յատուկ կայր համակերպութեամբ, տառաւոր էր ամեն բան և մտքից էլ չէր անցնում թէ իրը կարելի էր որ և է բարոյութեամբ առաջ բերել առանց իր խղճի դէմ գործելու և առանց իրական կրօնի պարագրի սկզբունքներից մէկը կամ մի քանիսը դեմ բերելու, որոնց երկուսն էլ նա հեռացնում էր հաւատարմութեան սահմանից՝ իբրև հարազատ միւսլիման, անտալով իր քարոզիչների խրատներին: Միւսում էր ուրեմն, որ բողոքէր նա, որ իսկական պատճառն էր թիւրք հասարակ ժողովուրդի մէջ արմատացած այդ ֆրատիստին, նրա այդ ապաթիային դէպի ամեն մի յեղաշրջում, ամեն մի նոր բան, որ իսլամութեան հետ կապ չունէր: Եւ իրօք, առաջին բողոք բարձադները սօֆիստիկան են եղած, զբղված Միդհատ փռայնի և իր կուսակիցների համոզիչ փառսերից:

(Կը շարունակվի)

*) Պիտաք Աստուծոյ մահաւատականութիւնը, որ Հայոցին թէ ինչ կրօն ունի, նա կը պատասխանէ իրաւոր Աստուծոյ մահաւատականութեամբ:

*) Վերջին մարդկանց կամ լը ուն մահ գաւառէն յորեք յետոյ ուրել մարդկանց գաւառ չէ:

քի ընկնող զեր չունենին, այնու ամենայնիւ խաղացին բաւական լաւ: Իսկ մեր սիրողները կատարեցին իրանց դերերը շատ բարեխղճ կերպով: Մուտքը սպասածից աւելի էր:

Աւերորդ չենք համարում մի քանի խօսք առել Բարեգործական ընկերութեան նոր բացված «գրադարան-ընթերցարանի» մասին: Այցելողներին թիւր բաւական չափ է: Միայն ցաւելով պէտք է խոստովանուի, որ գեղեցիկ սեռի մշակութիւնը մինչև հիմա չէ անցել զաւ նայել, օգտվել այգիպիսի մի օգտաւէտ հիմնարկութիւնից: Ստացվում են բաւական թիւով հայերէն և ռուսերէն լրագիրներ և ամսագիրներ, զրբերի մեծ պահածանութիւն կայ առ այժմ, բայց ի նկատի ունենալով, որ գրադարանը նոր է բացված, յոյս ունենք, որ մօտ ապագայում վարչութեան անդամները եռանդուն գործունէութեամբ և կողմնակի անձանց օգնակցութեան շնորհիւ, այդ պահանջն էլ կը լրանայ:

Ի դէպ, մի նկատողութիւն, երբ ներս էք մտնում գրադարան, նկատում էք, ի միջին ալլոյ, մի խոռոչ, որ իբր թէ կարգում է, իբր թէ հետաքրքրվում է գրականութեամբ, և որը առաւօտանից մինչև երեկոյ դուրս չէ գալիս ընթերցարանից: Տեսնում էք դրանցից մէկը կամ միւսը վեր է առնում մի ամսագիր, օրինակ «Вестник Европы» կամ «Русская Мысль» և այլն, չուռ է տալիս դէս, չուռ է տալիս դէն և ստանց մի բան հակախառն մի կողմ է դնում, ապա վեր է առնում մի երգիծաբանական թերթ, տուն է տանում մի սիրահարական բովանդակ, թէ ինչ է, տեսէք, ես էլ եմ գնում ընթերցարան, ես էլ եմ հետաքրքրվում գրականութեամբ և այլն, առանց մի բան հակախառն կամ օգուտ քաղելու, նոյն իսկ շատ անգամ առանց կարգալու մի քանի օրից յետ է բերում: Շատ սխալ և փառակար երևոյթ է այս: Յանկալի է, որ ընթերցանութիւնը աւելի լուրջ ընթացք ստանար, և հոգ տանէր, որպէս զի որոշ հասակի և որոշ պատրաստութեան մարդիկ օգտվէին իրանց մատչելի գրքերից, առանց ցուցամուտութեամբ դարձնելու:

Կ. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նրէկ, յուլիսի 22-ին, Մայր-կայսրուհի Մարիա Ֆեօդորովնայի անուանակոչութեան առիթով, քաղաքը զարդարւած էր դրօշակներով: Տաճարներում կատարվեցին զոհացողական մատչանքներ:

Մեր թղթակցից, Կ. Պօլսից, հաղորդում է մեզ յուլիսի 14-ից հետեւեալը. «Ներք օրէ ի վեր «Հայրենիք» լրագրի անօրէն Յովհաննէս Դանաշար բանտարկուած է: Թերթը չի հրատարակուել առ այժմ»:

Մենք արդէն հաղորդեցինք, որ Թիֆլիսում եղող մի խումբ ռուսացիներ և վարժուհիներ զիմեւ են էջմիածին, խնդրելով որ հարուստ եկեղեցիները փոխաբերաբար փող տան աղքատ դպրոցներին՝ անօգնական վարժապետների ուսնելիքները լրացնելու համար: Այժմ մեզ հաղորդում են, որ էջմիածինից Նախագետ վարդապետը պատասխան է հետագրում թէ այդ տեսակ խնդիրը առաջնորդի կողմից պէտք է լինի:

Մենք արդէն մի անգամ առիթ ունեցանք հաղորդելու, որ Կ. Պօլսի հայերի մէջ յայտնի մի քանանայ, այն է՝ Յովհաննէս առաջ քանանայ Մկրտան նոյնպէս միացել է Ազգեան-Նորեան խմբին և դարձել այդ խմբի եռանդուն անդամներից միւրը: Ամերիկայում հրատարակուող մի լրագիր նոյնպէս մասնակից է անում այդ փառաքանի վրա, և Կ. Պօլսի իր թղթակցի բերանով իրստ կերպով յարձակվում է Մկրտան քանանայի բռնած ուղղութեան վրա:

Մեզ հաղորդում են մեր քանանաների կեանքից հետեւեալ նոր տեղ փառք. «Թիֆլիսում ապրող մի ներքին-ազգայնի, կարապետ խուռապանայ» իր հիւանդ կնոջը հաղորդելու համար՝ զիմում է կուկիայի ու Ստուռածածին եկեղեցու քանանայ Տէր-Խաչատրին, բայց... քանանան մերժում է դալ, տեսելով թէ «նշանդէր» է գնում: Նշանդէրէր պատճառով մերժել հիւանդին հա-

ղորդութիւն ապ' դա էլ մի նոր քաջագործութիւն պէտք է համարել մեր անուղղելի տէրտէր-ներին կեանքի մէջ...

«Ալքից ընկել է» Շուշու թեմական դպրոցը: Համարեա ոչ ոք չէ ուզում այնտեղ տեսուչ լինել: Հոգաբարձութիւնը դիմեց Ս. Մայրխանանին. նա հրաժարվեց: Դիմեց Ս. Թանդեանին. նա էլ հրաժարվեց: Դիմեց փ. Վարդանանին, ինչպէս գրում են հայոց թերթերը, մինչև անգամ նա էլ հրաժարվեց: Դիմել է Մօսկվա՝ Լազարեան ձեռնարանի տնօրէն Կուսիկեանին, և ինչպէս գրում են Շուշուց, նա էլ հաւանօրէն կը հրաժարվի:

Հոգաւար Նազըմ փաշայի գործիք՝ Վահան վարդապետ Տէր-Մկրտանանին, ինչպէս մեզ գրում են Կ. Պօլսից, պատրիարքարանը առաջարկել է գնալ էջմիածին՝ «մեղքերը բաւելու համար»: Սակայն «Հայրենիքի» վերջին համարներից մէկում այդ հոգաւարանը յայտնել է, որ բոլորովին մտադրութիւն չունի էջմիածին գնալու:

Մեր թղթակցիցը Հեղեղեղից մեզ գրում է. «Յուլիսի 20-ին Ս. Ամիրխանեան Շուշու գաւառում էլ մի զանազանութիւն է կարգաւորել հայերի մասին: Յաւանք ենք, որ մեզ չափողից գնալ այնտեղ և ներկայ լինել դատախոսութեան»:

Մենք արդէն կասեց յայտնեցինք Սպաստից ստացված այն լուրի մասին, որ իբր թէ վանի առաջնորդական փոխանորդ Սահակ վարդապետը սպանուած է Նա ողբանով չէ, և ինչպէս հաղորդում են վանից, թիւրբայց կառավարութեան կարգադրութեամբ՝ յուլիսի 9-ին ուղարկվեց Կ. Պօլսի:

Պարսից նոր Շահը, ինչպէս լսել են Ֆրանսիական լրագիրները, մտադիր է 1897 թւին ճանապարհորդել Եւրոպայում:

Նիժնի-Նովո-Ռոսիի ցուցահանդէսի կարգադրիչ յանձնաժողովը, ինչպէս հաղորդում է «Каспий» լրագիրը, ուղարկել է Բագուի քաղաքային վարչութեան մի թուղթ, որի մէջ յայտնում է, թէ չը նայած յանձնաժողովի ձեռք առած միջոցներին, դեռ ցուցահանդէսի մասին տեղեկութիւններ չի: Եւ տարածված թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում: Բացի դրանից, լուրեր են տարածվել ամեն տեղ թէ ցուցահանդէսը, որպէս թէ չէ վերջացած, թէ ճանապարհահանդէսը մինչև Նիժնի շատ թանգ է, թէ քաղաքում ապրել շատ դժուար է՝ չափազանց թանկութեան պատճառով: Այդ բոլոր հանգամանքներն են, որ չեն թող տալիս շատ մարդկանց գնալ ցուցահանդէս: Այցելողների թիւը չէ համապատասխանում ցուցահանդէսի ծաւալին և կազմակերպութեան: Այդ պատճառով ֆինանսների միջոցառող հարկաւոր է համարել միջոցներ ձեռք առնել, որ շատ տարածվեն ճշմարիտ տեղեկութիւններ ցուցահանդէսի մասին:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Նորբուրում Բագու վանձանված՝ նահանգական դատարանի անդամ Նիկիտա Եակովլիչ թէր-թովմասեանցի մահվան առիթով (Ղուրբայում նա մի քանի տարիներ հաշտարար դատաւորի պաշտոն էր վարում)՝ կիրակի, յուլիսի 14-ին, երկու հոգեհանգիստ կատարվեցին՝ մէկը հայոց եկեղեցում, միւսը հաշտարար դատարանի դահլիճում: Երկու տեղ էլ ասեղ գցելու տեղ չը կար, այնքան շատ էր բազմութիւնը: Եկեղեցում երկու դամբանականներ խօսեցին՝ մէկը քանանան, միւսը Մ. Սալամբեգեանց: Վերջինը թուցեց հանգուցեալի արժանատիութիւնները: Հանգուցեալ Տէր-Թովմասեանցին յարգում, պատում, համակրում էին թէ այստեղի փղքաթիւ և թէ նոյն իսկ Բագուի ամբողջ հասարակութիւնը, ճանաչելով նրան որպէս վերին աստիճանի խելօք և մաքուր մարդ»:

Ա.Լ.ԲԱՍՆԻՐՈՊՈԼԻՑ, այդ քաղաքի Աղբատանոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տղաբեր հետեւեալ. «Հոգաբարձութիւնը պարտք է համարում հրապարակով հորհանդէսներին յայտնելու այն պարանքներին, որոնք իրանց սիրելիների մահվան առիթով նուիրել են Աղբատանոցին հետեւեալ գումարները. Գրիգոր Կրամբեան՝ 110 ռ.,

Պետրոս Միլիթարեան՝ 100 ռ., եղբայրներ Գրիգորեան 35 ռ.: Նոյնպիսի առիթով խոստացել է նուիրել Յարութիւն Բարամեան՝ 100 ռ.»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր ընթերցողներին ուշադրութիւնն ենք հրաւիրում՝ ուսաց արտաքին գործերի միջոցառութեան օրգան համարվող «Nord» լրագրի հետեւեալ խօսքերի վրա.

«Անգլիական և գերմանական մի քանի լրագիրների կարծիքով, Ռուսաստանը մտադիր է, ինչպէս և լինի, պաշտպանել Թիւրքիային կրեաական հարցում և հայոց գործերի մէջ: Դա բոլորովին ճիշդ չէ: Հայոց հարցում ուսաց կառավարութիւնը Թիւրքիային բարոյական աջակցութիւն ցուց տուց այն հիման վրա, որ խուճովութիւնները Հայաստանում կազմակերպել էր մի յայտնի կոմիտեա, որ գործում էր մի օտար պետութեան ներշնչմամբ: Ռուսաստանը մինչև այժմ էլ կը պաշտպանէր սուլթանին այդ հարցի մէջ, եթէ նա տեսնէր, որ Բ. Գուրը քայքայ է անում իր նահանգները խելացի կերպով ճանաչողութեամբ: Բայց որովհետեւ Թիւրքիան կարգը վերականգնելու համար ուրիշ միջոց չունի ի նկատի, բացի միայն այդ նահանգների խաղաղ ազգաբնակչութեան արիւնը թափելը, ուստի Ռուսաստանը, ի հարկէ, չէ կարող պահանջել Թիւրքիային այդպիսի ճանապարհի վրա: Ինչ վերաբերում է կրեական հարցին, Ռուսաստանը սկզբունքով արամարդված էր պահանջել օսմանեան տիրապետութիւնը այդ կըզդում, սակայն պայման դնելով ամենալայն դիւլճներ և ինքնավարութիւն հաստատել: Որովհետեւ Թիւրքիան կրեական կարգ վերահաստատել չէ կարողանում ուրիշ կերպով, բայց եթէ արիւնահեղութեամբ, ուստի Ռուսաստանը, ի հարկէ, չէ կարող թող տալ այդպիսի փորձեր «in anima vili»: Այդ պատճառով Ռուսաստանը պայմանաւորվել է իր դաշնակցի և միւս մեծ պետութիւնների հետ՝ երբեք այդ վրդուկցուցիչ դրութիւնը վերացնելու միջոցներ չմատնել»:

Մեզ գրում են Սալմաստից, որ պարսկական արքայազններին նայելով՝ վասպուրականում զոհ գնացած հայերի թիւը հասնում է 12 հազարի:

Մեզ գրում են վանից յունիսի 19-ից. «Անգլիական հիւպատոս Վիլեամս համոզեց հայերին հանրագիր մը պատրաստել և Սալմաստին փաշայի միջոցով ուղարկել սուլթանին՝ անոր գլխովինը խնդրելով»:

Կ. Պօլսից մեզ գրում են, որ երիտասարդ հրապարակախօս Տիգրան Արիփարեան, որը 15 օր առաջ կալանաւորված էր, այժմ արձակված է:

Կ. Պօլսի լրագիրներում կարգում ենք, «Հրաման տրուած ըլլալով որ Պիթլիսի պահեստի զօրքերու վաշտերը զենքի ներքե կանչուին, ձեռնարկուած է այդ գործողութեան: Մինչև հիմա բաւական զինուորներ հաւաքուած և զինուած են: մնացեալներուն ալ հաւաքուած և զինուած մեծ փութով առաջ կը տարուին: Մուշի, Սըղդիդի և Մեղիկիւտի պահեստի զօրքերն ալ զենքի ներքե կանչուելու համար՝ հրաման տրուած ըլլալով ծանուցուած է պէտք տեղը՝ այդ գործողութիւնը փութացնելու»:

ԼՈՒՐԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ

Կ. Պօլսից «Vossische Zeitung» լրագրին գրում են. «12 բառակոնքի ընդհիմ զօրքեր Մոնաստիր գաւառում մերժեցին Հաւաքան գնալ դուրս ներքի դէմ Նոյն իսկ մայրաքաղաքի զօրքերը անհնազանդութեան վտանգաւոր նշաններ են ցուց տալիս: Սուլթանի անձնական թիկնապահներին երկու հոգի ընկելով իրենցով Բէօլի-դ-Զերէի պարտեզի առջև բացարձակ կերպով յայտնում էին, թէ եկել են զեաւուրներին սպանելու: Բէօլի-դ-Զերէն այն արուարձանն է, ուր գտնվում են զեաւանների ամարանդները: Զինուորական ոստիկանութիւնը մեծ զոհուածութեամբ միայն կարողացաւ նրանց զինաթափ անել»:

«Կ. Պօլսում, ոստիկանութիւնը հրամայեց

բոլորական իշխան Ֆէրիդանգի պատկերները մաքաղիւնների պատահաններից վերցնել: Ինչպէս երևում է Կ. Պօլսում այժմ հակառօղարական զգացմունք է տիրում: Բոլորալայի բարեկամութիւնը Ռուսաստանի հետ և բարկանեան դաշնակցութեան դաւաճարը՝ այստեղ մեծ կասկածանքով է դիտոււմ»:

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, յուլիսի 13-ին

Օրուան հրատապ խնդիրը Վարչութեան, կրօնական և քաղաքական ժողովներուն, հրաժարումն է, որ անսպասելի եղանակով մէջանց դրուեցաւ այս օրերս:

Պօլսոյ հայերուն կողմէն վեց պետութեանց զեաւաններուն զրկուած ծանուցադիրը յուսացնել կուտար, որ թուրք կառավարութիւնը վերջապէս աստիճան մը պիտի հրաժարէր հայերը խոչտանդելէ. կը յուսայինք, որ հարստահարութիւնները պիտի դադրէին, բանտարկեալները պիտի արձակուէին ու ալ պիտի չարքուրէին հայաստանցի հայերը:

Այս ամենը կը յուսայինք...

Սակայն հայոց ծանուցադիրը անսպասելի ուրշունքներու կը մղէ դիրքերը, պարզապէս հարստահարութիւնը դադրեցնելու տեղ: Ոստիկանութեան նախարար Նազըմ փաշա չորեքշաբթի օր, 10 յուլիսի, յանկարծ իր մօտ կը հրաւիրէ Հայոց Խաւն Ժողովը՝ կարենոր զեկուցումներ ու համար: Ժողովին անդամներն ալ այդ երեւոյթին հրաւերին պատասխանելու աղուշութիւնը կունենան, քանի որ իրենք Արօնից և Արշարունիկեան նախարարութեան հետ միայն յարաբերութիւն ունենալով վերջին ծայր նախատալից և արհամարհող ընդունելութիւն մը կընէ Հայոց Վարչական Ժողովներուն. իբր թէ Պօլսի և թէ Զաւառները տեղի ունենալիք խռովութեան մը բոլոր պատասխանատուութիւնը իրենց վրա կը ծանրանայ. ու եթէ ո ե է խըրտում մը պատահի, Հայոց Վարչական Ժողովներուն անդամները խոստովանալ պիտի պատժվին:

Ժողովականներէն մէկ քանին կը փորձեն պատասխանել. սակայն Նազըմ ձեռքովը նշան կը նշէ թէ չուզէր մտիկ ընել, վաճառ դի, կըսէ, սուլթանին մէկ իրաւունքն էր, որ ձեռք հաղորդեցի, ո ե է առեկովութիւն չեմ կրնար մտիկ ընել: Ժողովականները դուրս կեւլեն և պատրիարքարան կուգան խորհրդակցելու: Նրէկ, ուրբաթ ալ արտասուլոր նիստ ըլլաւ. թէ ինչ որոշակեալ ընել, այնքան յայտնի չէ: Դեպքից որ թագրի մը գրքեր են Արշարունիկեան և Արօնից նախարար Ապիւրաւան փաշային սա իմաստով՝ որ եթէ կառավարութիւնը չարունակէ պնդել իրենց տեղեկութիւն չունեցած բանեղու պատասխանատուութիւնը իրենց վերադրելու անարդար պահանջումին վրա, պիտի ստիպուին խըմբովին հրաժարիլ:

ՆԱՍՏԱԿ ՊԱՐՍԱԿԱՆՆԵՐ

(Ճանապարհորդի նամակներէից)

Ուրմիա, յունիսի 30-ին

Յունիսի 15-ին, չաբաթ օր, ամբողջ Ուրմիա վաղ առաւօտացի մեծ յողմեւեռի և վրդովմունքի մէջ էր. թիւրք, հայ, պարսիկ, ասորի, հրէայ շատաւում էին դէպի Չարբազ գիւղը, որը քաղաքից մի քառորդ ժամ հեռաւորութեան վրա է գտնվում: Գնում էին տեսնելու երկու սպանված ասորիներին, որոնց դիակները գիշերով մալահայի կտրիճները բերել էին թիւրքաց սահմանազնից. դրանցից մինն էր ասորաց խալիֆա (եպիսկոպոս) Մար-Գորիէլ, իսկ միւսը՝ նրա եղբորորդին, քանամանայ մի պատանի: Եկեղեցու բազում գրված էին դիակները. նրանց գլուխները համարեա մարմիններից բաժանված էին. ամբողջ տեսքը անհելի ու քստմնելի էր, որովհետեւ հրացան և դաշոյն անխնայ կերպով գործել էին նրանց վրա, և վերքերի ու հարուածների թիւը չէր կարելի որոշել: Դիակների չորքը, գորգի վրա, նստած էին ասորի կանաք ձեռք և ջահիլ՝ և իրանց ողբերով, հառաչանքներով, արցունքներով և լաց ու կոծով աղմուկում էին օղբ: Մի պահու, որ դադարի գլխին նստած էր, մերթ ընդ մերթ դիակների վրա գցած վերմա-

